

Շարաթ մը առաջ՝ Օգոստոս 20-ին, «Նոր Օր»ի մէջ կարդացինք Սամուէլ Իլանճեանի նենգութեամբ լեցուն գրութիւնը ի պատասխան Դոկտ. Նայր Զաւէն Արզումանեանի իմաստալից յօդուածին, որ ինք կը կոչէ «անհաճոյ» եւ կ'ըսէ «դուն ալ Պրոյթոս»: Դմբուկին ձայնը նոյնն է, միայն թէ դմբկահարները կը փոխուին: Կը գրեն առանց գիտնալու թէ իրենց «անհաճոյ» յօդուածները պարզապէս կը ներկայացնեն իրենց անբարոյականութիւնը եւ կոյր մտայնութիւնը: Չեն կրնար հեռուն տեսնել, որովհետեւ իրենց տրուած ակնոցներով՝ միան քիթերնուն ծայրը կը տեսնեն: Բարեբախտաբար աղբամանը մեծ է եւ բոլոր այս ցնորքները աղբին վայել են:

Ուրախ ենք որ Ն.Բ.Ը. Միութիւնը արդէն ծրագրած է մեծ շուքով հարիրամեակ տօնել: Սամուէլին տրուած է ժամանակացոյց մը որպէսզի անպաշտօնօրէն յայտարարէ: Փառատօն, յուշատօն, ինչու չէ սգատօն, որքան ատեն որ անունը տօն է: Այս դմբկահարներու շարքին՝ կան սեւերես, աներես, դիմակաւոր երես մարդիկ, բայց ոչ տխուր երես՝ Մելգոնեանի հարցով: Արդեօք սրտով տխուր են: Յաւալին այն է որ Տուրեան, Փոսթաճեան, Ագատեան, Իլանճեան, Քէշիշեան, Պալիկեան կամ ուրիշներ, փոխանակ Բարեգործականի անցեալը եւ ներկան բաղդատելու, անհրաւօրէն եւ անվայելօրէն կ'անպատուեն ՆԲԸՄ-ի «առաջնորդներուն» քննադատները՝ մանաւանդ մեր կրօնականները: Երբ արթննան իրենց խոր քունէն արդէն ուշ պիտի ըլլայ: Քննադատելի է Միութեան մասնաճիւղերու ներկայ ղեկավարներուն լռութիւնը: Մենք ալ միշտ հաւատարիմ հետետրոյնք եղած ենք, բայց ո՛չ, չ'ենք կրնար ապուշօրէն հնազանդիլ եւ ընդունիլ սխալ որոշումներ՝ պարզապէս որովհետեւ որոշողը հինէն թաղին ծանօթ բարեկամն է, եւ կամ շատ հաւանաբար եթէ «դէմ ես՝ դուրս ես»: Ո՛չ, չ'ենք կրնար դաւաճան ըլլալ հանդէպ մեր սրբութիւններուն, մեր ազգային արժէքներուն, մեր անմահ բարերարներուն: Քանդելը դիւրին է բայց շինելը դժուար:

Ի՛նչ օրեր կ'ապրինք: Սամուէլ կը թելադրէ որ Նայր Զաւէն մնայ իր բարձրութեան վրայ, իսկ ինք եւ իր աջակիցները՝ վաղուց կորսնցուցած են արդէն իրենց բարձրութիւնը կամ երբէք բարձր չ'են եղած: Սամուէլ գայրացած է: «Ալ հերի՛ք է անցեալով ապրիք» կ'ըսէ: Արդեօք որո՞ւ անցեալը, միթէ՞ Ն.Բ.Ը.Միութեան անցեալը: Սամուէլ մտահոգ է մեր ապագայով, կը ճառախօսէ: «Քսանմէկերորդ դարու սեմին ենք, մեր ազգային պահանջքներուն եւ կարիքներուն գոհացում պէտք է տանք: Արդիական մօտեցումներով եւ ըմբռնումներով մեր երիտասարդութիւնը պէտք է մօտեցնենք հայ արժէքներուն, եկեղեցիին, հայրենիքին, որպէսզի անոնց սէրն ու հաւատքը վառ մնայ սերունդէ սերունդ»: Թուղթ շերեփով ապու՛ր կը խառնէ: Բարեգործականի ղեկավարներուն համար կը բաւէ որ մեր երիտասարդները հայ զգան, բնաւ հարց չէ եթէ հայերէն չեն խօսիր: Մելգոնեան եթէ չկայ, կայ Ամերիքն Ակադեմիան: Այ՛ս իրողութիւն է: Ա՞յս է լուծումը փառատր անցեալը վերապրելու համար: Վերին հրամանատարութեան գործակալները եւ գաղափարակիցները՝ թո՛ղ մնան իրենց բարձրութեան վրայ եւ թո՛ղ փորձեն չի կորսնցնել հայ մտաւորականներու եւ կրօնականներու օրհնեալ մեծարանքը:

Մեզմէ ձեզի խրա՛տ եւ մենք ալ մեր կարգին՝ ձեզի կ'ըսենք «Առ այժմ այսքան»: